ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հուլիսիսի 3-ից 5-ը Թեհրանում՝ (Իրանի Իսլամական Հանրապետություն) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ պարոն Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Էրիկ Գրիգորյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Թեհրան (Իրանի Իսլամական Հանրապետություն)

   2017թ. հուլիսի 3-ից 5-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Իրանի Իալամական Հանրապետություն, ՄԱԿ-ի բնապահպանական ծրագիր

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն ս.թ. հուլիսի 3-ից 5-ը Թեհրանում կայանալիք Ավազային և փոշային փոթորիկների դեմ պայքարին նվիրված միջազգային կոնֆերանսին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Հուլիսի 3-ին մասնակցել եմ փոշու և ավազային փոթորիկներին նվիրված միջազգային կոնֆերանսի բարձրաստիճան պաշտոնյաների համար նախատեսված հանդիպմանը:

Բացման խոսքով հանդես են եկել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ պարոն Հասան Ռոհանին, հնչեցվել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար պարոն Անտոնիո Գուտերեշի տեսաուղերձը:

Կոնֆերանսի ընթացքում կարևորվել է երկրների համագործակցությունը փոշու և ավազային փոթորիկների կանխարգելման և մեղմման աշխատանքներում՝ հաշվի

անոելով որ և ծագման աբյուրները, և տարածման շրջանակները չեն սահմանափակվում երկների սահմաններով:

Կոնֆերանսի ընթացքում մշակվել է Թեհրանյան հռչակագիրը:

7. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Նիստի շրջանակներում հանդիպումներ եմ ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության փոխնախագահ, բնապահպանական գերատեսչության ղեկավար տիկին Մասումե Էբթեքարի հետ, ներկայացրել բնապահպանական կառավարման և քաղաքականության ոլորտում Հայաստանի Հանրապետության ձեռքբերումները:

Առանձնազրույց եմ ունեցել նաև ՄԱԿ-ի բնապահպանական կազմարեպության ղեկավար պարոն Էրիկ Սոլհեմի հետ, ներկայացրել Հայաստանի բնապահպանության ոլորտի ներկա գործընթացները, բնություն-արտաքին պարտքի մեխանիզմը և այլ հարցեր: Պարոն Սոլհեյմը իր պատրաստակամությունն է հայտնել աջակցել Հայաստանին բնապահպանության ոլորտի նախաձեռնություններում և ցանկություն հայտնել առաջիկայում այցելել Հայաստան և առավել մանրամասն քննարկել բնապահպանության ոլորտի առաջնայնությունները:

Ճեպազրույցներ եմ ունեցել նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի օգնական Հաոլիանգ Խուի, Նիգերիայի շրջակա միջավայրի նախարար պարոն Իբրահիմ Ուսման Ջիբրիլի, Էկվադորի բնապահպանության նախարար Տարսիցիո Գրանիցիոյի, Իրանում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ պարոն Գերի Լյուիսի, Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի փոխնախարար Ալիրեզա Դաեմի հետ:

Այցի ընթացքում հանդիպել եմ Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Արտաշես Թումանյանի հետ:

ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

Է.Գրիգորյան